ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ
ՀՐԱՄԱՆ

« 25 » մարտ 2025թ. No 1766 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԴԵՂԵՐԻ ՀԱՎԱՍՏԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 47-րդ կետի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության անվտանգության, արդյունավետության և որակի գնահատման N 01/1256-25 առ 17.03.2025թ. փորձագիտական եզրակացությունը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել թվով 10 դեղի գրանցման հավաստագրի ժամկետի երկարաձգումը՝ համաձայն հավելվածի:

2.Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության քարտուղարության պետ Ա. Առաքելյանին՝ «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը

1) Սույն հրամանն ընդունվելու պահից տեղեկացնել «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը և Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին:

3. «Դեղերի և բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Ա. Բաղդյանին՝

1) Ապահովել սույն հրամանով գրանցված դեղի վերաբերյալ տվյալների հրապարակումը գրանցամատյանում՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի թիվ 162-Ն որոշման հավելված 1-ի 32-րդ կետի պահանջների:

2) Սույն հրամանը ստանալուց հետո ապահովել գրանցված դեղի վերաբերյալ տվյալների ընդգրկումը գրանցամատյանում՝ լիազոր մարմնի հաստատված կարգով:

4. Առողջապահության նախարարության հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Լ. Բաբախանյանին՝

1) ապահովել սույն հրամանի տեղադրումը առողջապահության նախարարության պաշտոնական կայքում:

5. Դեղի հավաստագրի ժամկետի երկարաձգման ժամկետի (5 տարի) հաշվարկը սկսվում է նախորդ հավաստագրի գործողության ժամկետը լրանալու հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X 

ԱՆԱՀԻՏ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Signed by: AVANESYAN ANAHIT 7103810157

Ա. ԱՎԱՆԵՍՅԱՆ

Հավելված

Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի

2025 թվականի մարտի «25 » - ի  N1766 - Ա հրամանի

Գրանցման հավաստագրի ժամկետի երկարաձգման դեղերի ցանկ համաձայն ՀՀ կառավարության N 162-Ն  առ 28.02.2019 որոշման

| ՀՀ | Առևտրային անվանումը | Ակտիվ բաղադրատարրի համընդհանուր անվանումը | Դեղաձևը | Դեղաչափը և Փաթեթավորումը, թողարկման ձևը | Դեղի արտադրական գործընթացում ներգրավված բոլոր արտադրողները (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Դեղի պետական գրանցման հավաստագրի իրավատերը (անվանում, գտնվելու վայր) | երկիր | Բաց թողնման կարգավիճակը | եզրակացության համար և ամսաթիվ | Հավաստագրի գործողության ժամկետը լրանալու օրը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Սիլվադեվ | արծաթի սուլֆադիազին | նրբաքսուք արտաքին կիրառման | 10մգ/գ; 40գ ալյումինե պարկուճ | Արփիմեդ ՍՊԸ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան, տուն 19 | Հայաստանի Հանրապետություն | Արփիմեդ ՍՊԸ, Կոտայքի մարզ, ք. Աբովյան, 2-րդ միկրոշրջան, տուն 19 | Հայաստանի Հանրապետություն | Դ | 22870 14.03.2025 | 17.01.2025 |
| 2 | Էզոլանզա | օլանզապին (օլանզապին դիհիդրոքլորիդի տրիհիդրատ) | դեղահատեր թաղանթապատ | 5մգ; (28/4x7/) բլիստերում, (56/8x7/) բլիստերում | Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ, 1165 Բուդապեշտ, Բոկենիֆոլդի փ. 118-120 | Հունգարիա | Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ, 1106 Բուդապեշտ, Կերեստուրի փ. 30-38 | Հունգարիա | Դ | 22871 14.03.2025 | 20.03.2025 |
| 3 | Էզոլանզա | օլանզապին (օլանզապին դիհիդրոքլորիդի տրիհիդրատ) | դեղահատեր թաղանթապատ | 7,5մգ; (28/4x7/) բլիստերում, (56/8x7/) բլիստերում | Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ, 1165 Բուդապեշտ, Բոկենիֆոլդի փ. 118-120 | Հունգարիա | Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ, 1106 Բուդապեշտ, Կերեստուրի փ. 30-38 | Հունգարիա | Դ | 22872 14.03.2025 | 20.03.2025 |
| 4 | Էզոլանզա | օլանզապին (օլանզապին դիհիդրոքլորիդի տրիհիդրատ) | դեղահատեր թաղանթապատ | 15մգ; (28/4x7/) բլիստերում, (56/8x7/) բլիստերում | Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ, 1165 Բուդապեշտ, Բոկենիֆոլդի փ. 118-120 | Հունգարիա | Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ, 1106 Բուդապեշտ, Կերեստուրի փ. 30-38 | Հունգարիա | Դ | 22873 14.03.2025 | 20.03.2025 |
| 5 | Էզոլանզա | օլանզապին (օլանզապին դիհիդրոքլորիդի տրիհիդրատ) | դեղահատեր թաղանթապատ | 10մգ; (28/4x7/) բլիստերում, (56/8x7/) բլիստերում | Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ, 1165 Բուդապեշտ, Բոկենիֆոլդի փ. 118-120 | Հունգարիա | Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ, 1106 Բուդապեշտ, Կերեստուրի փ. 30-38 | Հունգարիա | Դ | 22874 14.03.2025 | 20.03.2025 |

| | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 6 | Էգոլանզա | օլանզապին (օլանզապին դիհիդրոքլորիդի տրիհիդրատ) | դեղահատեր թաղանթապատ | 20մգ; (28/4x7/) բլիստերում, (56/8x7/) բլիստերում | Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ, 1165 Բուդապեշտ, Բոկենիֆոլդի փ. 118-120 | Հունգարիա | Էգիս Ֆարմասյուտիկալս ՓԲԸ, 1106 Բուդապեշտ, Կերեստուրի փ. 30-38 | Հունգարիա | Դ | 22875 14.03.2025 | 20.03.2025 |
| 7 | Ամարիլ Մ | գլիմեպիրիդ, մետֆորմին (մետֆորմինի հիդրոքլորիդ) | դեղահատեր թաղանթապատ | 2մգ+500մգ; (30/3x10/) բլիստերում | Հանդոկ ինկ., 78 Դաեպունգսանդան-ռո, Դաեսո-մյեոն, Էումսեոնգ-գուն, Չունգչեոնգբուկ-դո | Կորեայի Հանրապետություն | Սանոֆի-ավենտիս գրուպ, 54, ռուե Լա Բոետի, 75008 Փարիզ | Ֆրանսիա | Դ | 22876 14.03.2025 | 04.03.2025 |
| 8 | Հելմինտոքս | պիրանտել (պիրանտելի էմբոնատ) | դեղահատեր թաղանթապատ | 125մգ; (6/1x6/) բլիստերում | Ինոտերա Շուզի, Ռու Ռենե Շանտերո, Շուզի-սուր-Սիս, Վալոիր-սուր-Սիս, 41150 | Ֆրանսիա | Լաբորատուար Ինոտեք Ինտերնասիոնալի համար, 22, Ավենյու Արիստիդե Բրիանդ, 94110 Արկոիլ | Ֆրանսիա | Դ | 22877 14.03.2025 | 19.12.2024 |
| 9 | Հելմինտոքս | պիրանտել (պիրանտելի էմբոնատ) | դեղահատեր թաղանթապատ | 250մգ; (3/1x3/) բլիստերում | Ինոտերա Շուզի, Ռու Ռենե Շանտերո, Շուզի-սուր-Սիս, Վալոիր-սուր-Սիս, 41150 | Ֆրանսիա | Լաբորատուար Ինոտեք Ինտերնասիոնալի համար, 22, Ավենյու Արիստիդե Բրիանդ, 94110 Արկոիլ | Ֆրանսիա | Դ | 22878 14.03.2025 | 19.12.2024 |
| 10 | Ֆլուկօպտ | ֆլուկոնազոլ | ակնակաթիլներ | 3մգ/մլ; 5մլ սրվակ-կաթոցիկ | Լիկվոր ՓԲԸ, 0089, Երևան, Քոչինյան փ., 7/9 | Հայաստանի Հանրապետություն | Լիկվոր ՓԲԸ, 0089, Երևան, Քոչինյան փ., 7/9 | Հայաստանի Հանրապետություն | Դ | 22879 14.03.2025 | 04.07.2025 |